Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն**
   ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Գուանժու և Պեկին,Չինաստան 2018 թվականի սեպտեմբերի 14-24

4. **Հրավիրող կողմը**
   Չինաստանի քաղաքացիական ավիացիայի վարչություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագրի պաշտոնական ստորագրում,
   - «Համաշխարհային երթուղիների զարգացում» (World Routes) խորագրով 24-րդ համաժողովին մասնակցություն:

6. **Քննարկված թեմաները**
   Ավիացիայի և օդային փոխադրումների ներուժի ու զարգացմանն ուղղված հարցեր

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպում Չինաստանի քաղաքացիական ավիացիայի վարչության փոխտնօրեն Վանգ Յիգինգի հետ: Քննարկվել են Հայաստան-Չինաստան պոտենցիալ ուղիղ չվերթներ իրականացնելու հնարավորությունները:

Կայացել են մի շարք հանդիպումներ 7 չինական ավիաընկերությունների (այդ թվում՝ China Southern Airlines և Air China մասով նաև իրենց կենտրոնական գրասենյակներում) և 12 այլ (ոչ չինական) ավիաընկերությունների հետ:

Կայացել է հանդիպում նաև օդային փոխադրումներին առնչվող տվյալների բազա ձևավորող և տեղեկատվություն տրամադրող ընկերությունների ներկայացուցիչների հետ (International Air Transport Association (IATA), Skyscanner և այլն), ինչպես նաև տեղի հայ գործարարների, օդային երթուղիներ մշակողների և տարբեր երկրների ներկայացուցիչների

հետ օդային փոխադրումների առումով չինացիների համար որպես շահագրգիռ վայր Հայաստանը ներկայացնելու համար:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև օդային հաղորդակցությունների մասին» համաձայնագիրը, որը հնարավորություն է ստեղծում իրականացնել ուղիղ չվերթներ (թեև Չինաստանի հետ ուղևորափոխադրումների ներկա ծավալները փոքր են):

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկներ են ներկայացվել միջազգային բարձր վարկանիշ ունեցող «Route Europe» և «Routes Asia» միջոցառումները Հայաստանում իրականացնելու վերաբերյալ, որը վերջիններիս կազմակերպիչների մոտ առաջացրել է հետաքրքրություն:

Առաջարկներ են ներկայացվել խոշորագույն օնլայն տուրիստական գործակալներից մեկի՝ Kiwi.com-ի ղեկավարությանը, Հայաստան նոր օդային ուղիներ կառուցելու հնարավորությունների վերաբերյալ: Նախնական գնահատմամբ նոր ուղիների գործարկումը կարող է տեղի ունենալ 2019-2020թթ. ընթացքում:

Չինական կողմից առաջարկներ են ներկայացվել Հայաստանյան մասնագետների համար Չինաստանում չինական կողմի հաշվին վերապատրաստման դասընթացներ/սեմինարներ իրականացնելու համար, այդ թվում՝ ավիացիոն անվտանգության, որակի, հսկողության գծով՝ 4 մասնագետի, քաղաքացիական ավիացիայի անվտանգության և կառավարման գծով՝ 4 մասնագետի և օդանավակայանների վերապատրաստման ծրագրի գծով՝ 2 մասնագետի համար:

10. _____

ստորագրությունը, ամսաթիվը

X _____